

**ՔԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**  
 Պուշկարիոյ համար  
 Տարեկան 12 Տր.  
 Վեցամսեայ 6 »  
 Արտասահմանի համար Տարեկան 15 »  
 Վեցամսեայ 8 »  
 Անկերկայի համար  
 Տարեկան 3 Տր.  
 Վեցամսեայ 1.50 »  
 ԿԱՆԻՍԻՆԱՅԻ ՎՃՃՈՒՄԼԻ  
 Իր սնուցման սպորտային կրեմլին համար 40 սանկրիտ է. իսկ վերջին կրեմլին համար 20 սանկրիտ է. կրեմլին առեղի սնուցման համար 20 ՍՊՂ գեղջ կրեմլայ :  
 Վառուսի համար ձեռքի 10 սանկրիտ

# ՇԱԽՈՒՄ

Նամակ և գրուակ դրկեց  
 Կառավարչութեան հասցեի  
 —  
 Редакция на ввѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjourn»  
 Varna (Bulgarie)  
 —  
 Կրեմլին և չիկ սրուի  
 Արտասահմանի ձեռքի  
 (20 ՍԱՆԻՏԻՄ)  
 Պուշկարիոյ համար ձեռքի  
 = 15 ՍԱՆԻՏԻՄ =

**ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ**  
 ԵՎ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԶԻՆՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԻՆՐԸ

**ՍԶԴ**

Մեր չի վճարող բաժանորդներէն կը խնդրենք շտապէն բաժանեցիկները զրկել. որպէս զի մենք ստիպուած չըլլանք ամէնքըն ալ մէկիկ մէկիկ խայտառակել հրապարակու :

**ՄԵՁ ԽԱՐՈՒՄ ԵՆ**

Հայերս ամենազժգաղ ժողովրդներէն մէկն ենք աշխարհի երեսին. մեր քաղաքական տագնապները գարեւոր են մեր ժողովուրդը այդ գարեւոր տագնապներէ մէջ շատ անգամ յուսատու խոստումներ է լսել այս ու այն հին և նոր շարժառանձիկներէն, պաշտօնաւոր և անպաշտօն քաղաքացիներէն, ու շարունակ խաբուել է :

Այսօր էլ հայ ժողովուրդը նոյն դրութեան մէջ է, և նոյն գիւրաւ հաւատար գէպի գանազան միապետներ ու գիւրաւագէտներ, Բաւական է մի եւրոպական թերթի հայի մասին լաւ գրեց, բաւական է մի քանի շարժառանձիկ անաղագէտներ հայկական հարցի մասին խօսեցին և ահա հայր կարծում է թէ էլ ամէն բան վերջացաւ. շուտով Սուլթանի ատամները փշրելու են և Հայաստանը ազատելու :

Հայը իբրև ստրկացած ժողովուրդ, իբրև իր վրա անվստահ ու կուրից փոխջող ժողովուրդ, միշտ տրամադիր է ուրիշի ձեռքով, մուրացկանութեամբ ազատութիւն ձեռք բերել : Եւ դրա համար էլ նա շուտով ենթարկվում է ու է եւրոպական թերթի գրածների ազդեցութեանը, կամ շարժառանձիկ պոլիտիկոսի խօսքին ու ամէն բան թողած, անձնատուր է լինում՝ երջանիկ երազներին :

Ժողովուրդը, ամբողջ մասամբ կարող է այդ ցնորքներն ունենալ, կարող է հաւատալ որ Նիկոլայի պէս Յարը, յանկարծ

կազմի հայկական ազատութեան մասին մտածել, Վիլհելմի պէս շարժի օրինաւոր հետ խորհրդակցել Հայաստանի մէջ բարենորոգումներ մտցնելու համար : Ի այց երբ այդ ցնորքները ունենում են ինտրիգէնտ մարդիկ, երբ այդպիսի յիմարութիւնների հաւատում է ազգի խելացի համարված մասը, արդէն մարդ համբերութիւնից դուրս է գալիս :

Մուրացկանութեամբ ազատութիւն ստանալու սխառմը հայերս մտցրինք պատմութեան մէջ : Ճիշդ է, մենք ունինք շատ զոհեր ասանակ հազարներով, բայց այդ զոհերը չը ջանացին իրենց կեանքը թանկ ծախել : Կեանք մուրացին թուրքից և թուրքը այդ կեանքը չը պարգևեց : Հայ կոտորված ամբողջ իր կեանքը չը պաշտպանեց նա կոտորվեց վիզը ծռած, ձեռքերը խաշած, աւելի ստրկացած, յուսալով որ իրեն թոյլ կը տան երկար սուղալ թուրքի ոտքի տակ :

Ու հայի այդ յատկութիւնով այսօր ազատութիւն է մուրացվում արիւննուշու, շարժի միապետներից ու շարժառանձիկ քաղաքացիներից : Բաւական չէ որ մուրում ենք, այլ և հաւատում ենք թէ կը տան մեզ այդ ազատութիւնը :

Ձէ. հայ եզրայրներ, ամէնքն էլ ձեզ խաբում են. Դէլկասէն Յարին հայ ժողովուրդի մասին ոչինչ չի ասել. Եթէ ասի էլ, Յարը Պօպետոնօսցէլէր ունի, որոնք հայի շնջումն են ուղում. Վիլհելմը չի ցանկալ քու սպտութիւնը. Փոքր Ասիան անանց հայի է պէտք նրան. նրա անտի թի տէրութիւններն հայը մրցակից կարող է հանդիսանալ : Դէլկասս սէն և Կոնսթանդ շատ շատ Սուլթանին արգիլեն մեզ կոտորելու, բայց մեզ ազատելու համար պատերազմի չեն բռնուի Սուլթանի հետ :

Մեզ միայն երկու ճանապարհ է մնում, առանց այդ շարժառանձիկ հետ ուղղակի գործ ունենալու, կամ հաշտվել մեր ստրկական վիճակի հետ և մեր գոյութիւնը քաշ տալ, կամ կուր մղել

անընդհատ, միահամուռ ուժով. կուր խորտակելու շարժառանձիկ ծրագիրները, կուրուով նրանց աւելի մեծ շահերը վտանգել որ ստիպվեն միջամտելու : Մուրալով մեզ բան չեն տայ ով հաւատացնում է թէ կը տան և այդպէսով յուսադրամ, նա կամ լիբը շարժառան է, կամ թէ յիմար :

Կրկնում եմ, մենք կամ պէտք է հաշտվենք մեր ստրկութեան հետ և մեր բռնաւորների ոտքերը հաւատարիմ շան պէս լիզելով ապրենք, մինչեւ որ կամաց կամաց կը ջնջվենք. կամ թէ պէտք է կռվենք :

ՎԱՐԴՕ

**ԹՂԹԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ**

ՄՈՒՇ, 30 Յուլիս

Մինչեւ այսօր ինչ որ կար ձեռք բերին ասին, միմիայն մընաց ընտանեկան պատիւներս, այն եւս երթալէն յետոյ, ապրիլ անպատուած աշխարհիս երեսը ինչ նշանակութիւն ունի մշեցոյ համար. ինչք և ստացուածքներ զոհեցինք բիրտ ուժին իսկ պատիւնիս ո՛չ, ո՛չ առ անտաննի է, և քանի որ սղջ եմք և միանգամայն անկարելի. այդ պատճառաւ է որ, շարունակ ամէն օր մարդասպանութիւններ և իւրիւնք կը պատահին երկուստէք : Նրբ այդ վախճառ հարեմական լակոտներն իրենց նպատակին չի կրնան հասնիլ, մէկէն կատաղութեան կը վազեն ու կը մատնեն թէ, այսինչ գիւղացիք յիզափոխակոտներ կը պահեն իրենց մէջ, ո, մէ որ շատ վշտացած են նախ անոր մատնանիչ կրնեն, ու կըսեն թէ ամէկ օր սուաջ ճան ֆէտայիները մենք տեսանք ստոր տան մէջ. և երբ կատաղութեան քով գացինք իմացնելու, փախուցցո՞ւնք. Պ. յոտն սակ ստոր մատնութիւններով տան մէջի գտնուած մարդիկը բանտարկել կուտան. այն ինչ խից ճերբ երբեք բանն մը տեղեկութիւն չուներն :

Գլխաւորաբար Մշոյ գաշտի գիւղերէն շատ տուժողներէն մէկն է Սուլուի գիւղը. որ Համիտի և սեւ Մուհամէտի ձեռքին մէջ գերի դառցած արիւն կուրան ատոնք քանի մը տարի առաջ ամէն մէկը մէյմէկ հայ կին տաճկըցուցին, այդ չը բաւելով, հիմա ալ սկսած են գիւղի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրն հայ ընտանեկան պատիւն ոտքի տակ առնելու աշխատիլ : Այդ պատճառաւ մէկ երկու անգամներ կը ռիւնք պատահեցաւ. շունբը տեսնելով որ իրենց դրութիւնը գէշ պիտի ըլլայ. Մուշ փախան, անպատուօրէն պարտուելու վրէժնին լուծելու համար կառավարութեան դիմեցին և պահանջեցին որ, իրենց էն նշանաւոր հակառակորդ Ս. Մ.ն ձեռքաւալէ, կատաղարութիւնը այդ երկու ազգեցիկ գաղանդներու բոլորին գահացում տալու ճամար անմիջապէս միջոցներ ձեռք առնելով շուտով զօրք զրկեց : Զօրքը գիւղ իջնալուն պէս Ս. Մ.ն կը պահանջէ բայց ի զուր, նա արդէն անհետացած էր, որքան որքան որ խոստութիւններ ու շարժարանքներ ի գործ կը դնեն անկարելի կըլլայ գտնել :

Ս. Մ.ը իւր բարկութիւնը այդ երկու գաղանդներու գլուխ թափելէ ետքը, օրաի հանգարտութեամբ, իւր զէնք վերցնելով գիւղէն դուրս կուգայ, լու համոզուած ըլլալով որ այլեւս անկարելի պիտի ըլլայ իրեն ապրիլ գիւղին մէջ :

Մի միայն այդ ճանապարհն էր որ տարիներէ յետեւ ճնշուած հարստահարուած ու անպատուած իր այրուած արտին զոլացում պիտի տայ : վրէժխնդրութեան արդար ոգով լեցուն՝ այս կողմերէ իւր նման վառուած ու կատաղարութեան ձեռքէ փախած 70ի չափ երիտասարդներ իւր շուրջ հաւաքուելով, սկսաւ Մշոյ գաշտի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը քայլել, այդ գաղանդներէն ձեռք անցածը սպաննել, չորս կողմահս ու արտաքի սփռելով :

(Շարու ճանկի)

ՕՐՈՒԱՆ ՆՈՒԹԵՐ

Պօլսոյ հայոց պատրիարքական լէշը իր գիւղերն գործունէութեան դա- գաթնակէտը հասած կերեւայ : Մինչ համաշխարհային մամուլը փողով թրմ- բուկով կը գուժէ նոր արիւնհեղու- թեանց վերաբացումը հայկական սպանդարանին մէջ, մինչ ընդհանուր շարժման մը նախանշանները կը գաղ- ուին ու օտար խիզճերը կը զարթնուն, և արտասահմանի հայ մամուլը տազ- նապի և բողբոջի ազդակներ կը բառ- նայ, Գուժ—Գափօրի պատրիարքա- րանը որջացող գէշ և լերկարջը թա- թերը վեր առած կը պարէ, չըջա- պատուած իր թոժիւններուն երամովը, նոր զոհերուն օրհասական հոնքիւն- ներէն կարծես ոգեւորուած :

Երածը անուր, ասրեգորութիւննե- րէ գուրս բան է : Հայ ազգը իր գո- յութեան ամենէն տագնապազին վայրկեանը անցնելու վրայ է, ու թուրքիոյ հայոց պաշտօնական ներ- կայացուցիչը, պատրիարքը, տեղէն չի շարժիր : Եւ, խղճի ու մտքի կա- տարեալ հանդարտութեամբ, հրապա- րակային ազօթքներ կը բացազանջ- երջողքի բորեանին արեւշատութեանը համար, փաշաներու ոտքեր կը լզու- ընտէ իր եզրօրը աստիճան՝ և կարգ մը մակաբոյժ թշուառ եկեղեցական- ներու ալ թուրք պատուանշուններ շնորհել ապու համար :

Ձարմանալի բան է որ ազգը հինգ տարիէ ի վեր կը տանի կոր այս տե- սակ արարածի մը գերիշխանութիւնը : Ի՞նչ կը յուր 95—96ի մեր աշխարհա- ստոտ յեղափոխական հիանալի գոր- ծունէութիւնը : Արդեօք խոհեմու- թեան թմբեցուցիչ մասունքը, զորս չորս հինգ տարիէ ի վեր մեր գիտուն տեղացուցից կարգ մը սոփեստ ազգա- սէրներ, իրենց ազդեցութիւնը բանե- ցուցին մեր յեղափոխական կազմա- կերպութեանց ուղղութեանը վրայ : Թող հրամանն առաջ գան այդ կար- ծեցեալ ազգասէրները ու ըսեն թէ հիմակ ի՞նչ ընելու է որ, առանց Պա- պը—Ալիի ցոյցի ու առանց պանքի գրաւման և առանց ու եւ է իցէ յե- ղափոխական բացաշայտ պայթումի մը, խուլ ու մեթոտաւոր սպանութիւնները մէկէն մէկ մեծաքանակ կոտորածնե- րու կերպարանքը կատանան : Իրողու- թիւններու այս հուանի ու բարձրա- գոյ պերճախօսութիւնը ամենէն շա- րհալից ու պապանծեցնող ապտակը

չէ՞ այդ ոսկեամենեւեմ երեսին փակ- ցուած : Եւ մտածել— ու մտածելն ան- գամ սոսկում կուսայ—դեռ կան այդ կարգի կոկոնցներ, դեռ կան յեղա- փոխութեան արագան խորանին առ- ջիւ լուսանք արձակողներ : Եւ կի- մանամ որ, Ձէյթունի Աղասի շերտ մը, որ դեռ վեց տարի առաջ ըմ- բոստացումի դրօշը ձեռքը բռնու- թեան գէմ կը խիզախէր, վերջերս վար գարկեր է յեղափոխութիւնը այն թերթիին մէջ խի ուր՝ ընդգլուժի ա- մենէն թեւադրական, ամենէն շքեղ պատկերները կը հանդիսագործին : Այս շուարեցնող հակառութեանց առ- ջիւ ի՞նչ կուզէք որ մտածէ ժողովուր- ղը, և ո՞ւր ուզէ տեսնալ իր փրկու- թեան ճամբան : Վերջապէս անոնք որ ազգին բարոյական ու մտաորա- կան վարիչներն են խելուքներն գլուխ- նին ժողովելով հօրք միահամուռ ու միատրոհուրք գործակցութեամբ մէ՛կ ճամբայ, մէ՛կ ճար, մէ՛կ միջոց ցոյց պիտի տան այս անել կացութեանէն դուրս ելլալու :

Եւ անդին, հրէջ մը որ ազգին ա- րիւնդը փարա կը վաստիկ ու փորը կը կշտացունէ, օգտուելով այս սի- րու խառնաշփոթութեանէն, իր հան- դիսաւորօրէն ստանձնած պարտակա- նութիւններէն ոչ մէկը կը կատարէ անպատու հան կերպով, ու Համիտ, գործունէայ սպանդարանապետ, ան- նկուն յարատեւութեամբ սուսկ կը ցանի իր մտադրած մեծ ու նուիրա- կան գործը, բնաջնջումը հայ ազգին : «Ժողովուրդին Համար» փունջ մը ուսեալ միւսիւնները, որոնք ժողովու- րդին գլխուն շան քաղց կարգալու. ե- լեր են, և որոնք, առաջ, վերջնա- կանապէս կաղարտեն կեդրոնականի սուրբ համբաւը, կը կարծեն որ ի- րենց հեռեւած ուղղութեամբը հայու- թիւնը ազատեն Համիտի պոլիբան ճանկերէն :

Իմ աչքին այդ Աղասի անուն սին- լքորը ոչոքեան աղետաբեր է ազգին որքան Օրմանեան մը կամ, նոյն իսկ Սուլթան Համիտ մը : Ժողովուրդը՝ ամբողջ ընդ, էր տեսնայ իր ազա- աութեան ամենէն քաջարի և անձնու- րաց զինուորներէն մէկը, որ դեռ ե- լիկ թշնամիին գլխուն սուր կը շար- ժէր և որ հիմակ յանկարծ կոնակը գարձուցած խոյս կուտայ ու յորդոր կը կարգայ նահանջել, կամ որ նոյնն է ըսել, թոյլ թալ թշնամիին որ ա- նարդէ խողխողէ քեզ, կը հարցնեմ ժողովուրդը բարոյական ի՞նչ վիճակի մը կը մատնուի :

Մեր ազգային արդի հրապարակին կացութիւնը, արդիւնք կարգ մը գը- լորներու և վարիչներու ձախող ուղ- ղութեան ինչի կասկած կը ներշնչէ թէ խուլ ու թագուն դաշնակցութիւն մը կայ Սուլթանին հետ և այլապէս կա- րելի չէ մեկնել Աղասիի մը հրապա- րակային ողբալի ուրացումը և ուրիշ- ներու ոգեւապառ մաքառումը յեղա- փոխական հրգեհին ծաւարմանը դէմ : Ոտքը չեմ ուզեր ընել այն անանուա- նելի ցածերուն որոնք գիշեր ցորեկ իրենց ողորմելի գանկը պատառ պա- տառ կընեն դառ նիւթիւր համար հայ յեղափոխական հզօրագոյն կու- սակցութեան ղոյութեանը դէմ աւե- լի անողք յարատեւութեամբ քան ու է Սուլթան համիտ : Ասոնց փառքը եւ վարձքը արդէն իրենց ստանձնած դժոխային դերին գործադ- րութեանը մէջ է :

Ազգին մէջ իսկ ազգին դէմ սարք- ուած այս դաւադրութիւններուն ա- նաջքը ի՞նչպէս առնել : Հարցում մը անհասարկ, որուն պատասխանը այն- քան դիւրին չէ առ : Ամէն պարա- գայի մէջ, հիմա կը հիմա յեղափոխա- կան պաշտօնական և անպաշտօն օս- կաններուն պարտքն է մոլեգնաբար- կուել վատերու կողմէ կազմուած ա- ղետալի հասանքի մը յառաջխաղացու- մին դէմ, թող չի տարու համար որ անիկայ ծաւալ գտնէ և յաջողութեամբ վերջացնէ Սուլթան Համիտին սկսած սիրելական գործը : Անշուշտ ներք- նապէս մղուած այս ան անոն պայքա- րէն մեծ արդիւնքներ յուսով յիմարու- թիւն կը լլար. բայց գոնէ պատու- թիւնը չի պիտի կրնայ ըսել որ հա- յերը ամենքն ալ համահաւասար վա- տասրտութեամբ, լուի մնջիկ, ձեռ- նածալ, զիւրկոր մասն բռնութեան ատամնաբոյցքին տակ, և հոն ճըզ- մոտեցան միջամտելու պէս չէ, ասիկա անտանելի միջամտեցային արտա մը պիտի ըլլար հայ անուան յիշատակին կցուած : Այն քաջերը որ հիմա և միշտ պիտի մաքառին վատերու և դա- սալիքներու դէմ, գոնէ հայութիւնը այսօրինակ անպատուութենէ մը փր- կած պիտի ըլլան :

ՇԱՒԱՐՇ

մանակի պահանջներին, նոյն փոփո- խութեանը ի հարկէ ենթարկվել են և մեր զարաշուխալ լոթիները : Վահէն այդ նոր սերնդի ներկայացուցիչ : Լօ թին դարձաւ նա ինչպէս անգալի և ըմբոստ էր դարձուցում, ու չէր են- թարկվում ոչ մի օրէնքի և ճնշման, նոյն դարձաւ քաղաքացի լինե- լուց յետոյ : Ծեղական ոստիկանութեան համար մի պատուհաս էր այդ քաջ, մարդ և անընկճելի լոթին : Անցեալները նա իր ընկերներով միտին մի քանի տաս- նեակ զինուորներ շարքը ու փշուր արեց հէնց այն ձորակի մէջ : Ձին- ւորները համարձակ վիլ էին ձոնձրա- ցել ձորակում լաւքը անող մի քանի կանանց : Երեսներէրից մին իսկոյն վա- ղում էր մտակայ բուստանները օգնու- թեան կանչելու, Վահէն սյունեղ քէֆ է անելիւն է լինում : Հէնց որ իմանում է, թողնում է քէֆը և թուշում է դէ-

ԹՕԼՍԹՕՅԻ ՆԱՄԱԿԸ  
ՖԵՐԱՍ ՌՈՒՍ ԴԱՇԵՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Իսապական Որկոյս թերթին խմբագիր Մաձինի գրաւոր երեք հարց ուղեր էր թօլթօլի Ֆրանս սուսական Դաշնակցութեան մա- սին :

Թօլթօլի հետեւեալը պատաս- խանած է :

«Իմ պատասխանս ձեր առա- ջին հարցին թէ ուսու ժողովուր- ղը ինչ կը մտածէ Ֆրանս. Ռուսա- կան դաշնակցութեան մասին հե- տեւեալն է. —

Բուն ուսու ժողովուրդը բոլորու- վին տեղեկութիւն չունի այդ դաշնակցութեան գոյութեանը մասին : Եթէ գիտնար, հաւատա- ցած եմ որ զժողո՛ւ պիտի մնար, որովհետեւ պիտի ըմբռնէր թէ սոնք ժողովուրդի հետ դաշնակցե- լը կը նշանակէ միաներուն հեռ- նամանալ, և պատերազմի բըռ- նուիլ :

Միւս հարցին թէ՛ «արգեօք ուսու ժողովուրդը Ֆրանսացիներու պէս կը ոգեւորուի, ես կը հաւատամ թէ պիտի կրնամ ըսել որ ան ոչ միայն Ֆրանսայի ոգե-ւորութեան մասնակից չէ, այլ երկէ իմանար թէ ինչ կը խօսին և ինչ կը ընեն Թուրքիայի մէջ այդ առթիւ, հակակրօթիւն մը պի- տի զգար դէպի այդ ժողովուրդը և չի պիտի վստահէր, որովհե- տեւ Թուրքիայ, առանց հիմնական պատճառի մը կը պնդէ թէ ար- տակարգ էր մը կը տածէ դէպի Ռուսիան :

Իսկ ինչ կը վերաբերի ձեր երրորդ հարցին՝ «ինչ նշանա- նակութիւն ունի այդ դաշնակ- ցութիւնը ընդհանուր քաղաքա- կրթութեան համար», ես իրա-ւունք ունիմ համարձակօրէն ը- սելու թէ՛ խնդրի առարկայ եղող երկու ազգերու դաշնակցութեան միակ նպատակը պարտերազմն է, կամ թէ՛ միւս ազգերը պատերազ- մով վախցնելը, որ այդ դաշնակ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻՆ

II

Հայրենիքից հեռանալու օրից ան- ցել էր մի քանի տարի, երբ մի ամառ տուն վերադարձայ, Իմ նախկին ա- շակերտակիցներիցս մի քանիսը արդէն քաղաքական դարձող վերջացրած և գործով զբաղվող մարդիկ էին, ու կազմում էին քաղաքի նորահաս ին- տելիգենտ երիտասարդութիւնը : Ի հարկէ մենք մեր ծանօթութիւնը վեր- նագրեցինք և ընկերներս ազատ ժա- մերին միշտ իրար հետ զրեանելու է- ինք գնում : Մեր գլխաւոր զրօսա-

վայրն էր քաղաքից մօտիկ ծառա- գարգ և ջրով հարուստ ձորակը : Այն- աեղ, քչքան ջրի ափին, սօսափող ծառերի ստուերներ տակ մենք կամ կարդում, կամ վիճում և կամ թէ մեր մանկական կեանք էինք վերջուտ :

Մի օր էլ նոյն ձորակի մէջ, մեր վաղեմի ծիրերի ախար առնի տակ նստած խօսում էինք անցած գնացած օրերի մասին, յանկարծ միտքս ընկաւ անհասկանալի Վահէն և ես ընկեր- ներս հարցրի :

— Զիչք, Վահէն ի՞նչ եղաւ հիմա ի՞նչ է անում, կրկին լոթի է, թէ խելքը գլուխն է եկել . . .  
— Վահէն, պատասխանեց Սմբատը, ընկերներիցս մին, մի տարօրինակ տարօրինակ բան գուրս եկաւ. նա հին լոթիների, նոր սերնդի ներ- կայացուցիչը բանդիսացաւ : Ինչպէս ամեն մի դատակարգ փոխում է ժա- մանակի հետ, և յարմարում է ժա-

պի ձորը Սկսվում է տուր ու դմբոցը զինուորներին մի լաւ ջարդում են. կանանց քողաք բերում և իրեն, արները տանում :

Այդ դէպքը ահագին աղուկ բար- ձրացրեց. զինուորներից շատերը վնաս- վել էին : Ոստիկանութիւնից խտուր պահանջվեց ձերբակալել յոնցաւոր- ները, սակայն խեղճ ոստիկանութիւնը թէեւ հասկացել էր թէ Վահէի գործն է. բայց սարսափից ոչինչ չը կարողա- ցաւ անել :

— Այնպէս ես պատմում : Սմբատ, որ կարծես թէ Վահէն էլ գոյութիւն չունի, շիջանդեցի ես :

— Այո, ափսոս. դրեթէ գոյութիւն չունի. Վահէն հիմա բանտարկված է. մի գրիւք. հայ լոթիներից մէկի հետ կուլ և ունենում : Լոթին Վահէին վերադարձում է կաշոյնով ոստիկաննե- րը գալիս են գրանց ձերբակալելու : Վահէն յարձակվում է մի ոստիկանի

ցութիւնը արդէն շատ փութեամբ հասցուցած է քաղաքակրթութեան և պիտի հասցնէ: Մէկ խօսքով անորմէ բարիք մը չը պէտք է սպասել:

Պրանտական կառավարութիւնը մամուլը, և ժողովուրդին մէկ մասը, որոնք կը հրճուին այդ գաշնակցութիւնով, արդէն շատ համակերպումներ բրած են և սպասու մարդատէր ժողովուրդի մը աւանդութիւններն շեղած, զեռ ստիպուած պիտի ըլլան իրենց հայեացքները և զգացմունքները յարմարցնել և բնական մէջ գտնուած ամենէն բնական, ամենէն յետագիւցեալ տոյժեան արամադրութիւններուն: Իսկ այդ ֆրանսայի համար մեծ փութեամբ է:

Ռուսիոյ համար այդ գաշնակցութիւնը արդէն վատ հետեւանքներ ունեցեր է, ու զեռ շատ պէտք է ունենայ եթէ Ռուսիակցութիւնը շարունակուի:

Այդ դժբաղդ գաշնակցումէն յետոյ, Ռուսիա այլ եւս չի նեղուիր Եւրոպական կարծիքէն, զոր աւել ճշտի կ'աւելնէր, և ընդհակառակը ամբողջ աշխարհի մէջ իբր առաջին քաղաքակրթութիւնը պաշտպանված կը զգայ, և հետզհետէ ւելի յետագիւցեալ պիտի ըլլայ:

Ռուսիան այդ տարօրինակ և դժբաղդ գաշնակցութիւնը, ըստ իստ, երկու ժողովուրդներուն, ինչպէս և քաղաքակրթութեան վրայ գէշ պիտի ազդէ:

Ընդունեցէք պարան  
Խորին յարգանքներս  
ԱՆԻՈՆ ԹՕԼՍՏՈՅ

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ (\*)

ԵՐԿՐԻՄՈՒԹԻՒՆ ՉԵՆԻ ՌԻՉԵՐ

Միանգամ ընդ միշտ կը յայտարարենք կուսակցականներուն, չէզոքներուն, անտարբերներուն, միութենականներուն, և ոչ—միութենականներուն թէ Հնչակեան կուսակցութիւնը փոխաբոյ է ճշմարիտ ու եղբայրական միութեան մը:

Պայմանաւորու բռնադատեալ միութիւնը անկարելի է ու նորանոր երկպառակութիւններու, նորանոր բաժանումներու պատճառ կը դառնայ: Միութիւնը որպէսզի իրական, տեսական ու արդաւանդ ըլլայ պէտք է որ կատարուի անկեղծօրէն, անշահախնդրօրէն, եղբայրօրէն, աստուանց պայմանի, այլ «երկու կողմէն համահաւասար զոհողութիւններով»:

Երկդիմութիւն չենք ուզեր: Եւ որպէսզի մեր խօսքերը, ինչպէս սովորութիւն է, սխալ չմեկնուին ու անոնց իմաստն ու սղին չի խեղաթիւրուին, թող Հայ ժողովուրդը գիտնայ թէ Հնչակեան կուսակցութիւնը պատրաստ է ու է զոհողութեան առջեւ չընկրկիլ: Օրինակի համար՝

1. «Ձեզնեւ Հնչակեան կուսակցութիւն» անունը»:
2. «Դադարեցնել իր պաշտօնական հրատարակութիւնները»:
3. «Կեդրոնական վարչութիւնը պատրաստ է ամբողջապէս հրաժարիլ»:
4. «Պատուոյ խօսք կեդր. վարչութեան կողմէ ասպազայ միացեալ մարմնին վարչութեանը մէջ ու է պաշտօն շտապաններու»:
5. «Եթէ կան զեռ մեծ ու փոքր զոհողութիւններ, որոնք կը վրիպին մեր յիշողութենէն»:

(\*) Տես նաև կեանքի թիւ 15:

կանխաւ կընդունինք զանոնք ալ»:

ԵՐԿՐԻՄՈՒԹԻՒՆ ՉԵՆԻ ՌԻՉԵՐ  
Կը կրկնենք,

Միութիւնը որպէսզի իրական, տեսական ու արդաւանդ ըլլայ, պէտք է որ կատարուի անկեղծօրէն, անշահախնդրօրէն, եղբայրօրէն, աստուանց պայմանի, այլ «երկու կողմէն համահաւասար և անտարածան զոհողութիւններով»:

ԿԵՆԻՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ,  
ՀԵՉ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՍԸ ԱՌԹԻԻ

Այսօր մենք արտասուցում ենք մեր կեանքի մէջ սպառնալից վտանգ մեալ Հնչակեան կուսակցութեան յայտարարութիւնը. միութեան խնդրի առթիւ:

Ի հարկէ Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ պարտաւոր է լուրջ ուշադրութիւն դարձնել այդ յայտարարութեան վրա. եւ անկէ այն, ինչ որ պահանջում են հայրենիքի շահերը: Միւս յեղափոխական խմբերն էլ պարտաւորութիւն ունին չափվելու այդ յայտարարութեան հետ:

Վերակազմակերպող հարցը ուղղակի են զրել. ոչ պէտք է դանդաղել ոչ էլ պէտք է շատ շտապել, ու ամէն ճիշդ պէտք է թափել որ մեր ներկայ ճիշտամտին աւելի մեծ սխալ չը գործենք:

Վերակազմակերպի աչք յայտարարութիւնը ինչ պատճառներով ձեռնուր էլ որ լինի, գոյնի է:

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Վերջերիք լոյս, որ ճարտանունը գիւտնադէտներ. Պրանտա և Թուրքիա այլ եւս չի պիտի պատերազմին. Ֆրանսական կառավարութիւնը արդէն վաերացուցել է պահանջատէր Թուրքիան և Թուրք կառավարութեան միջեւ տնդի ունեցած մասնաւոր

համաձայնութիւնը: Անշուշտ Սուլթանը մասնաւոր համաձայնութեան պիտի յանդի և միւս ֆրանսացի պահանջատէրին, Լորանտի հետ, ու ֆրանսական կառավարութիւնն այլ կրկին պիտի հաստատէ:

Պրանտան իր պահանջներու բաւարարութիւն ստանալէ վերջ, այնուհետեւ ոչ միայն Թուրքիոյ հետ չի պիտի պատերազմի, այլ և կրկին Սուլթանի բէժմիին պաշտպան պիտի հանդիսանայ. թուրք լրտեսները նորէն սպաս համարձակ պիտի գործեն Պրանտայի մէջ, Սուլթանը պախարակող ազատատէր ֆրանսացի խմբերները նորէն պիտի դատի կանչուին իբր ժամանակակից Եւրոպայի արժանի վեհապետներէն մէկը անպատուօղ:

Իսկ Սուլթան, այդ կարմիրը, ոտքէն մինչեւ գլուխը արկնոտ մարդահրէշը իր գործը պիտի շարունակէ:

Ու մեր ընտանի քաղաքագէտները ինչեք չէին սպասեր Պրանտայէն երեւակայութիւններն այնչափ բորբոքեցաւ որ թոյլ տուին կարծել ու հաւատալ թէ եւրոպական մեծ պետութիւնները, Չարին առաջարկութեամբ, Պրանտայի յանձնը են թուրքի գործը լինցնել ազէլ, դաս մը տալու արեւելեան խնդիրը վերջնականապէս կարգադրել:

Հասարակապետական Պրանտայի վարչները նոյնքան շահամոլ, նոյնքան ստոր հոգի դիւանագէտներ են, որ շախ և միապետական երկիրներու վարչները: Եթէ հայկական կոտորածներու ժամանակ Ռուսիա Լոպանով մը և Նիքոլա մը ունէր, Պրանտա ալ Հանթօ մը և Թիլիքս-Փօր մը ունէր:

Քանի մը շարքի վերջ Պրանտա—թուրքական ընդհարումին հետքն անդամ չի պիտի մնայ, և Սուլթանի մտերիմ Քոնստանդ կրկին պիտի վերադառնայ իր հրէշ բարեկամին քով, անոր փէշերը լլեւելու: Ի երկրայ Պրանտայի բարոյականութիւնը այդչափ միայն կրնայ ըլլալ. անորմէն աւելի մեծ բարոյական սպասելը կատարեալ ապշուիտ է:

Էն.

վրա եւ նրան սպանում. այդ իրարանցումի մէջ իրեն վիրաւորող հայ երիտասարդը ժամանակ է դառնում փոխելի. իսկ ինքը ձերբակալվում է: Հիմա բանաւորն է և ստանալիք աշխատանքի էր գտնուարարված, քսան տարով: Այս քանի օրերս պէտք է ստաննի:

Ախտս ազա. շատ կտրիճ էր. նա մի տեսակ մաւաւոր և բարոյական առաջնորդ էր մեր բոլորովին ազատ լոկիներին համար. նրանց շատ ստոր բնազդները բանաւորով էր: Նա կատարեալ բանաւորով էր Ասիական լոկի գաւազարդի մէջ:

Հիմա ստամ են. նրա սեղը գուցէ բուն լոկի Ար. աղբ. զիման սով Հացիթուխ Չանանի ազէն. յիշում են նա մեզ հետ էր գործող. և անտարակց. Բայց աւարակուց յետոյ, իսկոյն սեւ. չերկէզքին հագաւ, ու լոկի դարձաւ: Երբեմն մեզ հետ տես-

նվում է, և մեր մեղադրանքներին յնդիմանութիւններին պատասխանում է. թողէք Աստուած սիրէք լոկիները շատ լաւ մարդիկ են. նրանց մէջ ոչ վախառու կայ. ոչ չարչի և ոչ էլ անֆէրիտ. օրն ալ խտաղ, օրն ուտող մարդիկ են և շատ շատ լաւ գործեր կարող են կատարել գիտէք նրանք ինչ թունդ ազգասէրներ են: Ռուսներին չանդէս տաւ մ են. ձեռքերին ճար լինի մի հոս ուս կեդրանի ըն թողնի: Տեսնելիք թէ զգրողները փակած մասնակի ինչ տեսող էին կատարել: Արեւը արդէն յսել էր մասնաւոր արեւմտաբն. երբ մենք վերկացնէք քաղաք վերադառնալու:

Վամոց կամոց ձարակից գուրս եկանք և գիմեցինք զչպի քաղաք:

Դեռ նոր էինք հասնում քաղաքի գլխաւոր փողոցին, կը իսկոյն մեր աչքի ընկաւ փողոցում խոնվող ամփոխը մի ծայրից մինչեւ միւս ծայրը: Կարծես թէ քաղաքում մի տարօրինակ զեպրէր պատանի. քայլերս առաջացրինք որպէսզի յետոյ հասկանաք այդ իրարանցումի պատճառը: Ոստիկանները այս կողմ այն կողմ էին վազում, աշխատում էին փողոցում խոնվող ամփոխը ցրվել: Ամբողջ ամբողջ էր, ընդհակառակը կարծես թէ ամենի զեպրում էլ գոնուակութեան ժգիտ էր փայլում: Վերջապէս բաւական մտեցանք կամուրջին, որը շինված է քաղաքի ուղիղ մէջանքը անցող լիւնային գետակի վրա. կամուրջի շուրջը զինտ օրներ էին կանգնած, երբեմն երբեմն կամուրջի սակ հրացան էին ստանկում:

Վերջապէս Ար. աղբ մի մտրիկ ծա-

նօթի հանգիպելով հարցրեց այդ իրարանցումի պատճառը:

— Ես, չը գիտէք. Վ. հէն փախել է:

— Ինչպէս, բունայց

— Ոչ, այսօր բաւական չեմ տեսնում բազմիք են տարել. Վահէն, լու չը գիտեմ ինչպէս, կ'սրողացել է իրեն նետել գետսի ձորի մէջ. հիմա կարծում են որ կառուցվելից մէկի տակ պահված կը լինի: Բուր կամուրջներն էլ զինուորներով չը շարապատու են եւ այսպէս հրացան են արձակում: Մի քանիսն էլ ոստիկաններին հետ մտել էին կամուրջների տակերը եւ փնտրում են: Բայց գատարկ բան է. Վահէն էլ ձեռք չի ընկնել: Մի անգամ որանց ձեռքիցը փախելուց յետոյ, նա էլ անձնատուր չի լինի:

(Ընտրուեալի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Գաւառաց կարօտեալներուն բաշխուելու համար Պատրիարքարանը կարեւոր նպաստներ զրկած է :

Յարութիւն փաշա Տառեանը հիւանդացած ըլլալով Սուլթանը Տօքթ. Խօրատանճեան էֆէնտիին զրկած է անոր որպիսութիւնը հարցնելու և առողջապահական վիճակը հասկնալու համար :

Արեւելքէն կը տեղականանք թէ Սանասարեան վարժարանի կտակատար Պ. Կարապետ Եղեանց երկուշաբթի օրը Կ. Պօլիս ժամանելով նոյն իրիկունը Պատրիարքի տունը հիւրասիրուեր է : Պ. Եղեանց Սանասարեան վարժարանի կալուածները աւելցնելու համար խնամակալութեան հետ պիտի խորհրդակցի եզեր :

— Սուլթանը արտօրնած է Աղգային Հիւանդանոցի համար Գարակէօղեան կտակին 5000 ոսկիովը շինուելիք որբանոցին շէնքը կառուցանել Իսկիւտարի Գալֆայան այգին համանուն գետին վրայ :

— Մերսինէն Արեւելքի գըրուած թղթակցութենէ մը կիմանանք թէ Սահակ Եպիսկ. Խապանեան որ Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեանց պաշտօնը ունի Մերսին հասեր է :

— Եզերիոյ գաւառային ժողովը տեղւոյն համար առաջնորդ ընտրեր է Անանիա վրդ. Նահապետեանը :

— Նոյնպէս Կարնոյ գաւառային ժողովը քուեներու առաւելութեամբ իրենց առաջնորդ ընտրած են Չաւէն Ծ. վարդապետը :

— Մխիթար Արքայօր երկհարիւրեամեակը աօնելու համար Պօլսոյ Մխիթարեան միաբանութեանց կողմէ կազմակերպուած հանդէսին ազգային պատրիարքարանը ալ պաշտօնապէս հրաւիրուած ըլլալով. պատրիարքարանի կողմէ Բաբէն և Տիրալ վարդապետը. Մէթէոս էֆ. Պէրպէրեան և ուրիշ քանի մը անձնաւորութիւններ ներկայ գըրուած են :

— Ներսէս վարդապետ Փափագեան. որ նախ հայ լուսաւորչական ծնած և իր ուսումը ազգային հիւանդանոցի մէջ սկսելով Պէրպէրեան վարժարանը լրացուցած էր, վերջելու կաթողիք վարդապետ կը ձեռնադրուի որուն մալեռանգ Պապական մը ըլլալը շտտերուն ծանօթ է. այդ անձը նոյն օրը Արքայօր գրական ծառայութիւնները գրուտելու համար խօսելու հրաւիրուած ըլլալով բանախօսութեան մէջ ըսած է թէ. Միայն կաթողիկէ եկեղեցին էր լոյսը և գիտութիւնը

կրցաւ իր մէջը տարածել. ազգին քիչ մէկ մասը կրցաւ հասկնալ և յարեց կաթողիկոսութեան. փափազելի է որ մնացածն ալ ըմբռնէ յարի :

Այժմ կը լսուի թէ այդ ոգւով արտասանած քարոզի պատճառաւ Փափագեանի արգելուած է քարոզել :

— Հոչակասոր դրագէտ Նոյրայր Բիւզանդացի մօտ 25000 ֆրանք հանգանակեր է յօգուտ Մխիթարեան միաբանութեան յորելեանի առթիւ, ու զրկեր է Վենետիկի միաբանութեան :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Պրանսական կառավարութիւնը հաստատեր է թիւրինի և թուրք կառավարութեան միջեւ գոյացած համաձայնութիւնը :

— Արտարին գործոց նախարար թէֆիկ փաշան ֆրանսական դեսպանատան խորհրդական Բարբսթի Լօրանտօյի պահանջի խնդրելը կարգադրելու համար գրուոր ծրագիր մը զրկեր է :

— Վեց շաբաթէ ի վեր Սասունէն լուրերը կը պակսին. տաս վաշտ զօրքեր շրջապատած են այդ գաւառը, ուր քրդերը մեծ խռովութիւններ հանած են :

Կըսուի թէ Ջօլամէրկի մէջ, Պարսկաստանի սահմանադրուիին մօտ ասորիները ապստամբած են :

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Չերքակալուած անիշխանուհի էմմա Կօլտ, ազատ արձակուած է :

— Ոստիկանութիւնը կը կարծէ որ նախագահի կեանքին դէմ ալ անիշխանական դաւադրութիւն կայ :

— Մակ-Քինլին սպաննող Յօլգոս ելեքտրական գործիքով պիտի գլխատուի :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Բրէթօրիայէն Անգլիա կը հաղորդեն թէ Պօէրները մտադիր են Տամարալէնտի սահմանազրուելը գաղթել, ուր Գերման հիւպատոսը խոստացեր է հողեր յանձնել անոնց. մէկ հեքթարը մէկ ֆրանքի փոխարէն: Այս պարագային մէջ Պօէր տղաք գերմաներէն լեզուով ուսում պիտի առնեն և երկու տարի ալ զինուորական ծառայութիւն պիտի մատուցանեն. Այս առաջարկը վիճաբանութեան տարկայ եղեր է Պօէր կիներու ազոց պատասպան բանակատեղերուն մէջ. Կը

կարծուի թէ քսան հազար Պօէր ընտանիքներ օգուտ պիտի քաղեն այս առիթէն՝ իրենց երկրէն հեռանալու համար: Էօհաննէսպուրկի մէջ բնակող Պօէրներ ամերիկեան կառավարութեան հարցուցեր են թէ՛ ինչ պայմաններով կրնայ զիրենք ընդունիլ Մ. Նահանգներու մէջ :

— Հոլանտա պիտի խնդրէ Գերմանիայէն, Ֆրանսայէն և Ռուսիայէն ոյժ տալ Պօէրներու պահանջին Անգլո-Ֆրանսական վեճը Լա—Հէլ իրաւարար ատեանին յանձնուելու համար :

Վիլհէլմինա թագուհին այս իմաստով նամակ մը պիտի գրէ Ջարին :

— Եւրոպայի մէջ Թրանսիլաի ներկայացուցիչը Լէյտոս բողոքագիր մը ուղղեր է Աւստրիոյ կառավարութեան գոնգատելով որ Աւստրիա բռնաբարած է շէկուքութիւնը և միշտ ռազմական նիւթեր կը մատակարարէ Անգլիոյ :

— Ուն է կուսակցութեան չը պատկանող քանի մը անգլիական Լրագիրներ Թրանսիլաիէն հեռագիրներ կը հրատարակեն որոնք շատ ծանրակշիռ ցոյց կուտան անգլիացիներուն կացութիւնը: Պօէրները մեծ գործունէութիւն ցոյց կուտան. Վերջին լուրերուն նայելով պօէրները Քէրթաունի վրայ յարձակելու կը պատրաստուին :

— Կըսուի թէ Լա—Հէլ իրաւարարական ատեանը ինքզինքը անձեռնահաս հոչակեր է պօէրներու և անգլիացիներու պատերազմին միջամտել :

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ս

Թերթերը կը հաղորդեն թէ՛ անիշխանական «նէօս Լէպէն» թերթի խմբագիրը ձերբակալուած է, և այն թիւը որուն մէջ Մաք-Քինլիի սպաննութեան մասին գրուածք մը կայ եղեր հակառակ ոգւով գրաւուած է :

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Չինաստանի մէջ վերջերս պատահած մեծ հեղեղները սարսափելի փրաններ հասցուցեր են. 10 միլիօն հողիէ աւելի բնակարաններէ զրկուեր են :

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Տէպրա թերթը կըսէ թէ Միւսան, Պօտէն և Անտրէ չորավար Ջարին մեկնելէն անմիջապէս ետքը, նախարարութենէն հրատարեր են :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Իշխանը Սօֆիա վերադարձեր է և տեսակցութիւն ունեցեր է նախարարապետ Քարապէլօֆի հետ :

— Արտաքին գործոց նախարար պ. Տանէֆ Բարիզ մեկներ է. ոմանք կըսեն փոխառութիւն մը յաջողցնելու համար է նախարարին այդ ճամբորդութիւնը :

— Շուտով երեսփոխանական լրացուցիչ ընտրութիւնները տեղի պիտի ունենան :

Բոլոր կուսակցութիւններն ալ եռանդուն պատրաստութեանց մէջ են :

Կառավարութիւնը պաշտօնապէս յայտարարած է որ ինք իր կողմէ թիկնածուներ չը պիտի առաջարկէ :

— Պաւլար մամուլին մէկ մասը սկսած է քննադատել ներկայ Մակիդոնական բարձրագոյն կօմիթէն, զայն անգործունէութեան մէջ մեղադրելով :

ԽՄԱՍԳՐՈՒԹԻՒՆ. «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցեւորման, նամակագրութեան, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ :

Գիները յոյժ գիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

ՅԱՆՉՆԵՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՒՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՄ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս Միութեան նամակ ուղարկելու և սոհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցեով Իւնիսն Տէ Զիլիսիակ Արմ. Լիօռնր րիւ սը Լիֆօլ սը Շիլի 2

Սուխ Ժընէվ Կարգոյիլր Յանձնաժողով

Ա Ջ Դ

Կը ծախուի 1896ին փրոր. 2ին իշխան Պօրիոյ մկրտութեան արթիւտպուած գործածուած նամակագրօշմներ 1—5—15—25 սանդիմ :

Դիմել ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ Վառնա

ОТГОВОРНИКЪ:

Мурадъ Ераносянъ

Печ. Взаимность — Варна